

ԱՆՅԵԱԼ ԵՒ ՆԵՐԿԱՅ

Հին, քաղցր յուշի սեղանին երկրպագուն Երկիրդ՝
Մայրըս կ'ապրի Անցեալի տեսիլքին դէմ ծնրադիր...
Իր հին երգիքն ու անթաղ մեռելներն իր կորսւած
Կարծես միշտ զի'նք կը կանչեն արհաւիրքի մէջ անձիր...

Որդիս ցնծուն է գալիք նոր օրերով շողարձակ.
Աճող երազն իր զըւարթ՝ Ապագան է ծաղկաւէտ,
Ապրած դարու սրտին հետ իր սիրտն է մի'շտ համադարի,
Այսօր արբել'ու էր Երկիրնք նետուած աստղով ձեռակերտ...:

Ու կը խորհիմ - որո՞ւն մօտ ճանչնալ իմաստը կեանքին,
Հոգիս հինի եւ նորի ներդաշնակումն է յաւէտ.
- Գուցէ Գալի՛քը բանայ ծաղիկներն իմ բաղձանքին -
Կամ կը կասիմ անցեալիս ճամբաներուն մէջ անհետ...

Բայց ես Ներկա'ն եմ, կապով՝ անցեալ խորհուրդը՝ նորին...:

Սեպտ. 1958

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

ԵՐԳ ՍԻՐՈՅ ԵՒ ԵՂԲԱՅԻՐՈՒԹԵԱՆ

Կարօտով թրթռուն սրտիդ քընարէն,
Ո՛վ լուսեղէն մայր, տո՛ւր լար երգերուս,
Որ կարօտալառ փրփրոտ սրտերու,
Յօրինեմ սիրոյ երգեր քաղցրայոյդ:

Եւ քու մայրական հրճուանքիդ լոյսով,
Մարած յոյսերու ժըպիտը վառեմ,
Ու լուսափրփուր երգիդ կարկաչով,
Անքուն աչքերու օրօրներ հիւսեմ:

Արեւ - նայուածքիդ մաքուր շողերով,
Թող ատելութեան ճահիճը ցամքի.
Ու սիրաբորբոք համբոյրիդ հուրով,
Սառած սրտերու ձըմեռը հալի:

Ամպը գորովիդ հովանի բռնէ՛
Խոնջէնքի տենդով վառ ճակատներու,
Եւ հիւծախտաւոր այտերու վըրայ
Յանէ՛ աչքերուդ բոցը վենսատու:


Սրտիդ լուսաչող աղամանդին դէմ,
Բռնաւոր սուրին շրթունքը փշրի.
Ու ծաղէ ի ծաղ թող եղբայրութեան
Ձանգը զօղանջէ կանչով մայրենի:

Եւ յաւերժութեան դու սեմին կանգնած,
Բաց սրտիդ զեղուն փեթակը լոյսէ,
Ու մեղրածորան սիրոյդ շողերով
Սըտերը բոլոր իրար կամրջէ:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ԴԱԶԱՐԵԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԵԶ



Փոքրիկ բայց շատ սիրուն նկարները, Գե-
ղամայ լեռները եւ Սեւանի կղզին ու եկե-
ղեցին:

Հայաստանէն նուէրներ էր բերած,
զրքեր, քարտեր, լաւաչ հաց: Ամէնէն
խորհրդանշականն էր Պատմաբանասիրա-
կան համալսարանի ատաղձին թիւը, զոր իր ե-
տեւէն Մոսկուա հասցուցած էին, որպէս-
զի ամէնէն առաջ հասնէր Ս. Ղազար. մեծ
հետաքրքրութեամբ թերթատեցինք եւ
տեսանք ճոխութիւնն ու զանազանութիւնը
բազմաթիւ բանասիրական հարցերու, ո-
րոնց մասին պիտի անդրադառնանք:

23 Յունիսին առաւօտը դարձեալ վանք
կու դար Զարդարեան, իր հետն ունենա-
լով այս անգամ քանի մը ուրիշ ուսու ար-
ուեստագէտ աշխատակիցներ. Վուչեթի՛ն՝
արձանագործ Ակադեմիկոս Մոսկուայէն,
նկարիչ Թրուֆանով՝ Լենինկրատէն եւ
ուրիշներ: Մեծապէս գնահատեցին նկար-
ներու մեր հաւաքածոն. մասնաւորապէս
արձանագործ Վուչեթի՛ն հիացաւ հայկա-
կան մանրանկարներուն վրայ, զոր գուր-
գուրանքով կը դիտէր. անպատճառ բանալ
տուաւ հնադարեան աստուածաշունչ մը,
փնտոցեց Եսայիի մարգարէութեան Բ. գը-
լուխին 4րդ համարը, որ կ'ըսէ. «Եւ ձու-
լեցին զսուսերս իւրեանց ի խոփս, եւ
զսուսինս իւրեանց ի մանգաղս. եւ ոչ առ-
նուցու աղղ յաղղի վերայ սուր, եւ ոչ ան
ուսանիցին տալ պատերազմ»: Երբ զար-
մանքով կը հարցնէինք թէ ինչո՞ւ կը
փնտոցէր այս հատուածը, յարեց թէ այդ
բնարանին վրայ հսկայական արձան մը
ունի, այժմ ցուցադրուած Պրիւքսէլի մէջ,
որ հաւանօրէն դար նաեւ Վենետիկ:

Իսկ նկարիչ Զարդարեան յուզուած էր.
բաժանումը տալուրիչ էր. դժբախտաբար
կարճ էր իրենց տրամադրելի ժամանակը
եւ չուտով մեկնեցան այս երազային կղզի-
ղեակէն, տանելով իրենց հետ մեր սիրոյ
դիմանկերը հեռաւոր մեր բոլոր հայրե-
նակիցներուն, գիտնականներուն եւ ժողո-
վուրդին, որոնք տենդով կ'աշխատին հայ-
րենիքի վերելքին համար անխնայ:

Հ. Ն. Տ. Ն.